ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 70

«11» 10 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի N 2-Ն հրամանի հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգի 11-րդ կետի պահանջները, Հայաստանի Հանրապետության դատախազության ակտիվների (պարտավորությունների) գույքագրում կատարելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ և 11-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով հաստատված կանոնադրության 17-րդ կետի 5-րդ և 15-րդ ենթակետերով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազության ակտիվների (պարտավորությունների) գույքագրման աշխատանքներն իրականացնել 2021 թվականի հոկտեմբեի 12-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 17-ը:
2. Հայաստանի Հանրապետության դատախազության ակտիվների (պարտավորությունների) գույքագրում կատարելու նպատակով ստեղծել գույքագրման կենտրոնական հանձնաժողով, հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ **Հ.Գրիգորյան**,

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետի տեղակալ **Մ.Մեժլումյան,**

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ **Ա.Գաբրիելյան**

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ **Ա.Սարգսյան**

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի մասնագետ **Հ.Շոխոյան:**

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններում և Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացնել գույքագրման աշխատանքներ՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետ (ՀՀ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար)

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ **Ռ.Առաքելյան**

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ **Կ.Համբարձումյան**

ՀՀ ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ **Մ.Գևորգյան;**

ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչությանն աջակցող բաժնի պետ (անուն, ազգանուն) (ՀՀ գլխավոր դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների դեպքում):

4. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազությունում իրականացնել գույքագրման աշխատանքներ՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ զինվորական դատախազի տեղակալ (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ **Ռ.Առաքելյան**

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ **Կ.Համբարձումյան**

ՀՀ ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ **Մ.Գևորգյան,**

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչության պետ (անուն, ազգանուն)

5. Մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազություններում իրականացնել գույքագրման աշխատանքներ՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

մարզի (Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանի և կայազորի զինվորական) դատախազ (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ **Ռ.Առաքելյան**

ՀՀ ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ **Մ.Գևորգյան,**

մարզի (Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանի, կայազորի զինվորական դատախազության) տարածքային բաժնի (վարչության) պետ (անուն, ազգանուն),

6. Գույքագրման կենտրոնական հանձնաժողովի նախագահ **Հ. Գրիգորյանին՝**

1) տեղերում պարզել ստորաբաժանմանը գույք ամրացնելու վերաբերյալ ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի հրամանների և գույքը տնօրինելու վերաբերյալ այլ իրավական ակտերի առկայությունը

2) գույքագրման ակտերը՝ այդ թվում՝ գույքագրմամբ հայտնաբերված ավելցուկ կամ պակասորդ գույքի վերաբերյալ կազմված առանձին ակտերը մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը հանձնել Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչություն:

3) մինչև 2021 թվականի դեկտեմբերի 29-ը ներկայացնել դուրս գրման ենթակա գույքի ցանկը:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը:

9. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ